ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՎԱՀԱԳՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՍՄԿԿ XXVII համագումարում, Կենտկոմի 1987 թ. հունվարյան և հունիսյան պլենումներում նշվեց, որ ժողովրդական տնտեսության զարգացումն արագացնելու, նրա ղեկավարումը կատարելագործելու ողջ աշխատանքում կուսակցությունը հետևողականորեն իրականացնելու է աշխատավորների ստեղծագործական նախաձեռնությունը զարգացնելու, արտադրության կառավարման մեջ նրանց ակտիվորեն ներգրավելու, հասարակական արտադրության մեջ անձնական գործոնի դերն ու նշանակությունն ըստ ամենայնի բարձրացնելու կուրս[1]։

Մարքսիզմ-լենինիզմի դասականները բազմիցս անդրադարձել են արտադրողական ուժերի համակարգում աշխատուժի նշանակության հարցին։ «Հավելյալ արժեքի տեսությունների» երրորդ հատորում Կ. Մարքսը, քննադատելով կենդանի, անմիջական աշխատանքի փոխարեն արտադրության իրային գործոնը գերագնահատող և այն առաջին պլան մղող բուրժուական տնտեսագետներին, ընդգծում էր, որ նրանց բոլոր ըմբռնումներում անցյալի աշխատանքը հանդես է գալիս ոչ թե որպես կենդանի աշխատանքի միայն առարկայացած մոմենտ, ոչ թե կենդանի աշխատանքի իշխանության տարր, այլ որպես իշխանություն այդ աշխատանքի վրա։ Բուրժուական քաղաքատնտեսների նման ջատագովության ներքին դրդապատճառները միանգամայն հասկանալի էին. կապիտալը դիտելով որպես արժեստեղծող գործոն նրանք ձգտում էին քողարկել արժեքի և հավելյալ արժեքի ստեղծման իրական աղբյուրը, կապիտալիստական արտադրության շահագործողական բնույթը։

Աշխատանքային փորձով և հմտությամբ օժտված մարդն ինքն է ստեղծում աշխատանքի առարկաներ և աշխատանքի գործիքներ, և դրանով իսկ հասարակության գլխավոր արտադրողական ուժն է։ «Ամբողջ մարդկության առաջին արտադրողական ուժը բանվորը, աշխատավորն է»[2],— գրում էր Վ. Ի. Լենինը։ Սակայն բոլոր շահագործողական հասարակարգերում, այդ թվում նաև կապիտալիզմի օրոք աշխատուժի կրողի «ազատությունը» արտադրության միջոցներից պայմանավորում էր նրա ենթարկվածությունը արտադրության նյութական տարրերին և դրանով իսկ ստիպում զարգացնել միայն վերջիններիս սեփականատերերի շահերով թելադրված ունակությունները՝ ի վնաս մյուս բոլորի։ Ի տարբերություն կապիտալիզմի, սոցիալիզմը ենթադրում է բազմակողմանիորեն զարգացած մարդկանց առկայություն, մարդիկ, որոնք կարող են ազատորեն կիրառել իրենց ունակությունները, ընդունակությունները և ձիրքը։ Բազմակողմանիորեն զարգացած աշխատուժի ձևավորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումով սոցիալիզմը հնարավոր է դարձնում հասարակության նոր արտադրողական ուժի ծագումն ու զարգա-

---

[1] «ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը», Երևան, 1986, էջ 55, 58, 210, «Սովետական Հայաստան», 28. I. 1987, 26 . VI. 1987։

[2] Վ. Ի. Լենին, երկ, հ. 38, էջ 447։

ցումը։ Բայց պոտենցիալ հնարավորությունը դեռևս ռեալ իրականություն չէ։ Արտադրության միջոցների հանրային սեփականության պայմաններում այդպիսի հնարավորություններ ստեղծվում են, սակայն դրանց կենսագործումը կախված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից, այդ թվում հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, տնտեսական օրենքների իմացության և կոնկրետ կյանքում դրանց պահանջները հաշվի առնելու աստիճանից, քաղաքական իրավիճակից և բազմաթիվ այլ գործոններից։

Վերոհիշյալ պարագաների անտեսումը, որ հանգեցնում է տնտեսական շահերի համակարգի առանձին բաղկացուցիչ մասերի թերագնահատման կամ վերջիններիս իրացման ընթացքում առավելապես ոչ տնտեսական մեթոդների ու լծակների կիրառման, հղի է անցանկալի ոչ միայն տնտեսական, այլ նաև այլ կարգի հետևանքներով։ 1920-ական թվականներին մեր երկրի գյուղատնտեսության մեջ արտադրության միջոցների հանրայնացման ընթացքում կամավորության փոխարեն հարկադրանքի, տնտեսականի փոխարեն վարչական մեթոդների կիրառումը, շքամոլությունը և լենինյան սկզբունքներից այլ շեղումները, որոնք հակասում էին աշխատուժի անձնական շահերին, զգալիորեն դանդաղեցրին արտադրողական ուժերի զարգացման տեմպերը, բարդացրին իրավիճակը երկրում, որն իր հեռավոր արձագանքները գտավ ՍՍՀՄ զարգացման նաև հետագա տարիներին։ Հայրենական մեծ պատերազմի 4 ահեղ տարիներին ՍՍՀՄ-ում հանրային և ոչ հանրային հոտը կրճատվեց 1/7-ով, այն դեպքում, երբ խաղաղ տնտեսական շինարարության 4 տարիներին (1928—1932 թթ.)՝ գրեթե 3 անգամ[3]։ Պատկերը համարյա նույնն էր Հայկական ՍՍՀՄ-ում։ 1928 թ. համապատասխան մակարդակը մեր երկրում ձեռք բերվեց 1950-ական թվականների վերջերին միայն։ Միաժամանակ բացի տնտեսականից «բյեկտիվ տնտեսական օրենքների դերի ու նշանակության թերագնահատումը, նրանց պահանջների իրականացման պրոցեսում կամայական, դրանց գործողության բնույթից չբխող, չհիմնավորված որոշումների ընդունումը, վարչարարությունը ծնեցին սոցիալական և քաղաքական պրոբլեմներ, որոնք առավել ցայտունորեն դրսևորվեցին հատկապես 1930—1950-ական թվականներին։ Վերոհիշյալ պրոբլեմների լուծումն այնքան բարդ էր ու դժվար, որ հասարակության զարգացման պատկերն ամբողջացրեց մեկ պարույրով ևս։

Հասարակական արտադրության զարգացումը արտադրության միջոցների և մարդկանց դիալեկտիկական փոխազդեցության արդյունք է։ Ընդսմին արտադրողական ուժերի երեք բաղկացուցիչ մասերի՝ մարդկանց, աշխատանքի միջոցների և աշխատանքի առարկաների կատարելագործումը ենթադրում է նրանցից յուրաքանչյուրի համամասնական զարգացում։ Արտադրության միջոցների զարգացման մակարդակին աշխատուժի զարգացման համապատասխանության օրենքը պահանջում է նրանց ինչպես որակական, այնպես էլ քանակական համապատասխանություն։ Այսպես, ընդհուպ մինչև 1970-ական թվականների վերջերը ՍՍՀՄ-ը բնութագրվում էր արտադրության զարգացման առավելապես էքստենսիվ գործոնների տիրապետության ժամանակաշրջանով, որ իր հերթին պայմանավորում էր նաև աշխատուժի, արտադրության անձնական գործոնի առավելապես էքստենսիվ վերարտադրություն։ Այդ տարիներին բնորոշ էին բնակչության բնական աճի բարձր տեմպեր, ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների և ամբողջ բնակչության կրթական մակարդակի համեմատաբար արագ աճ և այլն։ Արտադրողական ուժերի նյութա-իրային տարրերի՝ աշխատանքի գործիքների և աշխատանքի առարկաների մեջ տեղի ունեցող հիմնականում քանակական փոփոխությունները ուղեկցվում էին

---

[3] Հաշվարկված է «Народное хозяйство СССР в 1958 г.» (М., 1959, с. 445, 451, 454) և «Сельское хозяйство СССР» (М., 1971, с. 245, 251, 263) ժողովածուների տվյալների հիման վրա։

հասարակության հավաքական աշխատուժի մեջ տեղի ունեցող քանակական փոփոխություններով։ Հետագա տարիներին ՍՍՀՄ ժողովրդական տնտեսությունն սկսեց աստիճանաբար փոխադրվել զարգացման առավելապես ինտենսիվ ռելսերի վրա, որ նույնատիպ փոփոխություններ առաջացրեց արտադրության անձնական գործոնի վերարտադրության մեջ։ Աշխատուժի վերարտադրության մեջ առավելապես քանակական ցուցանիշներն աստիճանաբար սկսեցին իրենց տեղը զիջել նրա վերարտադրության որակական ցուցանիշներին, որակական տարրերին։

ՍՍՀՄ սոցիալ-տնտեսական զարգացման ներկա ժամանակաշրջանում, գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանում որակապես նոր տիպի արտադրության միջոցների՝ աշխատանքի գործիքների և առարկաների, սկզբունքորեն նոր տեխնոլոգիական պրոցեսների երևան գալը համապատասխան թռիչքաձև որակական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացնում արտադրության նաև անձնական գործոնի մեջ։ Աշխատուժի որակական մակարդակին ներկայացվող պահանջները արտադրության միջոցների զարգացմանը զուգընթաց փոխվում են։ Այդ պատճառով գիտատեխնիկական հեղափոխությունն աշխատանքի գործիքների և առարկաների կատարելագործման հետ մեկտեղ ենթադրում է կադրերի համապատասխանություն արտադրության տեխնիկային ու տեխնոլոգիային, արտադրության կազմակերպման ձևերին, աշխատանքի նոր գործիքների և առարկաների ստեղծման ու դրանք կիրառող աշխատուժի պատրաստման միջև ընկած ժամանակի անընդհատ կրճատում։ Փոխվում է այս կամ այն պրոֆեսիայի, մասնագիտության կադրերի կազմի և կառուցվածքի նկատմամբ ժողովրդական տնտեսության ունեցած պահանջը, ուստի կրթության համակարգը, աշխատուժի պատրաստման պլանավորման համապատասխան օղակները պետք է անմիջապես արձագանքեն վերոհիշյալ փոփոխություններին։ Ցավոք, տնտեսական մտածողության մեջ գոյություն ունեցող քարացածությունը միշտ չէ, որ թույլ է տալիս արագորեն վերակառուցել կառավարման այս կամ այն օղակը, օպերատիվ փոփոխություններ մտցնել կադրերի պատրաստման պլանների մեջ։ Այսպես, 1984/85 ուս. տարում ինժեների մասնագիտությամբ Հայկական ՍՍՀ բուհերում սովորողների թիվը կազմել է բոլոր ուսանողների գրեթե 43 %-ը, ամբողջ Միության մեջ՝ ավելի քան 62 %-ը[1], այն դեպքում, երբ ինդուստրիալ տեսակետից զարգացած երկրներում այդ տոկոսը զգալիորեն ցածր է։ Մասնավորապես, ԱՄՆ-ում այն կազմում է 7,0, իսկ Կանադայում՝ ընդամենը 4,9 %։ Հայաստանում ներկայումս էլ պահպանվում են ինժեներական մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման բարձր տեմպեր, չնայած որ երկարատև ժամանակաշրջանի ընթացքում ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ զբաղված ինժեներների հարաբերական թիվը՝ ինդուստրիալ տեսակետից զարգացած երկրների համեմատությամբ անհամեմատ բարձր է։ Դրա հետ մեկտեղ ՍՍՀՄ-ում և Հայկական ՍՍՀ-ում ավելի քիչ կենսաբաններ, քիմիկոսներ և մաթեմատիկոսներ են պատրաստվում։ Բացի այդ, հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում դեռևս կազմակերպված չէ բարձրորակ աշխատուժի պատրաստումը աշխատանքի հոգեբանության և սոցիոլոգիայի առումով։ Մինչդեռ այդ մասնագիտությունները նույնպես՝ պայմանավորված գիտատեխնիկական հեղափոխության տեմպերի արագացումով, արտադրության անձնական գործոնի վերարտադրության պրոցեսում սոցիալական, հոգեբանական տարրերի դերի բարձրացումով, ձեռք են բերել մեծ նշանակություն։ Այսպես, եթե 1973 թ. Կանադայի բարձրագույն ուսումնական հաստատություններում սոցիոլոգիական մասնագիտությունների գծով սովորող ուսանողների թիվը կազմել է բոլոր սովորողների 26 %-ը, ապա հետագա տարիներին այն գրեթե կրկնապատկվել է և ներկայումս կազմում է մոտ 50 %։

[1] Հաշվարկված է «Народное хозяйство СССР в 1984 г.» (М., 1985, с. 520) և «Народное хозяйство Армянской ССР в 1984 г.» (Ереван, 1985, с. 299) ժողովածուների տվյալների հիման վրա։

ՍՍՀՄ-ում և Հայկական ՍՍՀ-ում պատշաճ ուշադրություն չի դարձվում նաև կառավարման գծով մասնագետների պատրաստմանը։ Նման մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ և տնտեսական իրադրություն։ 1920—1950-ական թվականներին մեր երկրում արտադրության ղեկավարների գերակշռող մասը պրոֆեսիոնալ ադմինիստրատորներ էին, չունեին մասնագիտական կրթություն և կարողանում էին մի բան միայն անել՝ ղեկավարել։ Հետագայում տնտեսական կյանքի կենտրոնական դեմքը դարձավ ինժեները, որը, որպես կանոն, ուներ կազմակերպչական աշխատանքի որոշ ունակություններ և փորձ, սակայն հաճախ աղոտ պատկերացում ուներ տնտեսության կառավարման և տնտեսական օրենքների մասին[5]։ Արդի փուլից սկսած մեր երկրի տնտեսության ղեկավարման համակարգում գլխավոր դեմքը աստիճանաբար պետք է դառնա կառավարման գծով մասնագետը։

Նկատենք, որ արդեն այժմ ԱՄՆ-ում կառավարման գծով ապագա մասնագետներին բաժին է ընկնում բարձրագույն դպրոցում սովորող բոլոր ուսանողների 12 %-ը, ընդ որում կառավարման գծով ծրագիրն իրականացվում է ԱՄՆ-ի 25 համալսարաններում։ Կառավարման գծով մասնագետների պատրաստման ծրագիրը հավասար հիմունքներով պետք է ներառի ինժեներատեխնիկական կրթությունը և կառավարման մեթոդներին պրոֆեսիոնալ տիրապետումը։ Արդյունաբերության առանձին ճյուղերի համար ինժեներների պատրաստման ներկայումս գործող ավանդական ծրագիրը կառավարման հմտություններ չեն տալիս, քանզի ենթադրում են ինժեներական գործունեության կառավարման կողմերի լոկ մակերեսային ուսումնասիրում։ Ամբողջությամբ առած՝ կառավարման գծով մասնագետների պատրաստման նպատակը վերջիններիս արտադրական պրոցեսների, օժանդակ գործողությունների, նյութատեխնիկական մատակարարման ու արտադրանքի իրացման, ֆինանսական և վարկային գործառնությունների կառավարման պրոֆեսիոնալ գիտելիքներ հաղորդելն է։

Սոցիալիստական արտադրական հարաբերությունները պահանջում են, որպեսզի անձնական գործոնի զարգացման մակարդակը ոչ միայն համապատասխանի արտադրության միջոցների զարգացման մակարդակին, այլև առաջ անցնի նրանցից։ Եթե մինչսոցիալիստական ֆորմացիաներում, արտադրության միջոցներից նյութական բարիքներ արտադրողների անջատվածության հետևանքով, արտադրության միջոցների զարգացման մակարդակին աշխատուժի զարգացման համապատասխանության օրենքը ենթադրում էր առաջինների առավել արագ աճ, ապա սոցիալիզմի օրոք արտադրության անձնական գործոնի զարգացման տեմպերն են պայմանավորում նյութա-իրային տարրերի համապատասխան զարգացման տեմպերն ու մակարդակը։ Այդ կապակցությամբ Կ. Մարքսը գրում էր. «...իրենց, բանվորների վարպետության և գիտելիքների (գիտական ուժի) կուտակումը հիմնական կուտակումն է և անհամեմատ ավելի կարևոր է, քան նրա հետ ձեռք-ձեռքի տված գնացող և նրա կուտակումն արտացոլող առկա օբյեկտիվ պայմանների կուտակումը...»[6]։ Հատկանշական է, որ վերջին 10—15 տարիների ընթացքում մեր հանրապետությունը բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման տեմպերով գերազանցում է ոչ միայն միջին միութենական ցուցանիշը, այլև բոլոր միութենական հանրապետությունների համապատասխան ցուցանիշները։ Ինչ վերաբերում է այսօրվա մակարդակին, ապա անհրաժեշտ է նշել, որ ՀՍՍՀ-ը ներկայումս էլ առաջնակարգ տեղ է գրավում Միության մեջ։ Բարձրագույն կրթության համակարգում սովորողների համեմատական թվով (բնակչության 10000 շնչի հաշվով) 1984/85 ուս. տարում Հայկական ՍՍՀ-ն Միության մեջ գրավում էր հինգերորդ տեղը (173 մարդ)՝ ՌՍՖՍՀ-ից (213 մարդ), Լիտ-

---

5 Տե՛ս Н. Шмелев, Авансы и долги («Новый мир», 1987, № 6, с. 156, 157).

6 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, издание второе, т. 26, ч. III, с. 276.

վայից (192 մարդ), Բելոռուսիայից (186 մարդ) և Ղազախստանից (178 մարդ)[7] հետո։ Որակյալ աշխատուժի պատրաստման բարձր տեմպերը հանրապետությունում, բնականաբար, ուղեկցվել են բարձրորակ մասնագետներով ժողովրդական տնտեսության ապահովվածության աստիճանի բարձրացումով։ Այսպես, 1984 թ. ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ զբաղված 1000 աշխատողին բաժին է ընկել բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ 900 մարդ։ Նշված ցուցանիշով Հայկական ՍՍՀ-ն ՍՍՀՄ-ում գրավում էր առաջին տեղը։ Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ հանրապետությունը բնութագրվում է միջնակարգ մասնագիտական կրթությամբ կադրերի պատրաստման անհամեմատ ցածր տեմպերով, այդ ցուցանիշով Միության մեջ գրավելով 10-րդ տեղը։ Ընդսմին, եթե ամբողջ երկրում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետների հարաբերակցությունը արդյունաբերության մեջ կազմում է 1,0 : 1,2, ապա մեր հանրապետությունում ընդամենը՝ 1,0:0,9։ Հետևաբար հանրապետության արդյունաբերությունը աչքի է ընկնում բարձրագույն կրթությամբ կադրերով ապահովվածության չափազանց բարձր մակարդակով։ Սակայն որակյալ կադրերը հաճախ օգտագործվում են այնպիսի աշխատանքներում, ուր նման որակավորում բնավ չի պահանջվում։ Նկատվում է նաև հակառակ երևույթը։ Հանրապետության նյութական արտադրության (արդյունաբերություն, շինարարություն, գյուղատնտեսություն, նյութական արտադրությանը սպասարկող տրանսպորտ և կապ) ձեռնարկությունների 1000 ղեկավարներից բարձրագույն կրթություն ունի միայն 61 %-ը։ Արդյունաբերության մեջ, հայտնի պատճառներով, պատկերը փոքր ինչ բարվոք է, բայց այստեղ նույնպես ձեռնարկությունների 1000 ղեկավարներից բարձրագույն կրթություն ունի միայն 77 %-ը։ Նման երևույթը ոչ միայն հակասում է սոցիալիստական տնտեսավարման սկզբունքներին, այլև, որը պակաս կարևոր չէ, դանդաղեցնում է ժողովրդական տնտեսության մեջ գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների ներդրումը։ Չէ որ «կառավարելու համար պետք է ձեռնհաս լինել, հարկավոր է լիովին և մինչև մանրամասները գիտենալ այդ արտադրության տեխնիկան՝ նրա ժամանակակից բարձրությամբ, հարկավոր է ունենալ գիտական որոշ կրթություն»[8]։ Նյութական արտադրության ոլորտի կառավարման պրոցեսում տեղ գտած թերությունները, նրա նյութատեխնիկական բազայի զարգացման դանդաղ տեմպերը իրենց հերթին հանգեցնում են հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ դիտվող մի այլ բացասական երևույթի։ Բնութագրվելով ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների ամենաբարձր կրթական մակարդակով՝ Հայկական ՍՍՀ-ն բավական զիջում է միութենական հանրապետությունների մի մասին՝ Էստոնիային, Լատվիային, ՌՍՖՍՀ-ին, Վրաստանին, աշխատանքների մեքենայացման մակարդակով, աշխատանքի մեջ հոգևոր, ստեղծագործական տարրերի աճի տեմպերով։ Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ ընդգրկվածներից առավելապես ֆիզիկական աշխատանքով է զբաղված 70 %-ը, այն դեպքում, երբ առավելապես մտավոր աշխատանքով՝ ընդամենը 30 %-ը։

Կենդանի աշխատանքի ռացիոնալ օգտագործման շահերը պահանջում են կատարելագործել երկրի առանձին տնտեսական շրջաններում աշխատուժի տեղաբաշխման պրոցեսը, նոր արտադրական ձեռնարկություններ կառուցելիս առավելագույն չափով հաշվի առնել աշխատուժի որակական մակարդակը, նրա սեռատարիքային կազմը։ Աշխատանքի պրոցեսը միաժամանակ աշխատուժի սպառման պրոցես է և արտահայտում է մարդու վերաբերմունքը ինչ-ինչ մշակվող առարկայի, այնպես էլ սեփական աշխատանքային ընդունակությունների նկատմամբ։ Արտադրության յուրաքանչյուր կոնկրետ եղանակի պայմաններում, այդ թվում հատկապես սոցիալիզմի օրոք, կարևոր նշանա-

---

[7] «Народное хозяйство СССР в 1984 г.», с. 525.

[8] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, էջ 259։

կություն ունի յուրաքանչյուր սեռատարիքային խմբի աշխատուժի առանձնահատկությունների բացահայտումը, հասարակական արտադրության մեջ նրա տեղի որոշումը։ Դա պայմանավորված է նրանով, որ հասարակական արտադրության զարգացմանը, նրա ավտոմատացման աստիճանի բարձրացմանը զուգընթաց «մասնագործ բանվորների միջև արհեստակտորեն առաջ բերված տարբերությունների փոխարեն գերակշռություն են ստանում տարիքի ու սեռի բնական տարբերությունները»[9]։

Առանձին ռեգիոնների սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային պլանները մշակելիս առկա աշխատուժի կազմի ու կառուցվածքի անտեսումը խանգարում է աշխատուժի ռացիոնալ զբաղվածության ապահովմանը, հանգեցնում նրա չհիմնավորված և չպլանավորված շարժին։ Վերջին ժամանակաշրջանում մեր հանրապետության առանձին շրջանների զարգացման մեջ սկսել է դիտվել որոշակի միակողմանիություն. խոսքն առաջին հերթին Արևմտյան (Շիրակի) տնտեսական շրջանի մասին է։ Բանն այն է, որ վերոհիշյալ շրջանի արդյունաբերության զարգացման պլանները մշակելիս մինչև վերջ հաշվի չեն առնվել նոր ներգրավվող, լրացուցիչ աշխատուժի բնական առանձնահատկությունները, որի հետևանքով նրա գրեթե բոլոր վարչական շրջանները բնութագրվում են արդյունաբերության զարգացման միաճուղայնությամբ, ընդսմին դրանք կողմնորոշված են դեպի կանանց աշխատուժի կիրառումը։ Այդ պատճառով տղամարդկանց աշխատուժի լրիվ և ռացիոնալ զբաղվածություն ապահովելու հնարավորություններն արդյունաբերության մեջ՝ հատկապես ծայրամասային և հեռավոր շրջաններում, ցայսօր խիստ սահմանափակ են։ 1984 թ. Շիրակի տնտեսական շրջանի արդյունաբերության մեջ զբաղվածների 25 %-ը ընդգրկված էր թեթև արդյունաբերության մեջ, 58 %-ը՝ սննդի արդյունաբերության մեջ և արդյունաբերության այն ճյուղերում, որոնք նույնպես հիմնականում կանանց աշխատուժի կարիք ունեն։ Ընդ որում հարկ է նշել, որ առանձին վարչական միավորներում վերոհիշյալ բաժիններն անհամեմատ բարձր են։ Այսպես, սննդի արդյունաբերության մեջ զբաղվածների բաժինը Ամասիայի վարչական շրջանում հասնում էր գրեթե 96 %-ի, իսկ թեթև արդյունաբերության մեջ զբաղվածների բաժինը Լենինականում՝ ավելի քան 30 %-ի։

Միևնույն ժամանակ տնտեսական շրջանում անբավարար են զարգացած, հիմնականում տղամարդկանց աշխատուժ կիրառող արդյունաբերության այնպիսի ճյուղերը, ինչպիսիք են մեքենաշինությունը և մետաղամշակումը, շինանյութերի արդյունաբերությունը։ Մասնավորապես, 1984 թ. մեքենաշինության և մետաղամշակման ճյուղում էր ընդգրկված արդյունաբերության մեջ զբաղվածների միայն 9,0 %-ը։ Համեմատության համար նկատենք, որ նույն թվականին ՀՍՍՀ մեքենաշինության և մետաղամշակման մեջ զբաղված էր ամբողջ արդյունաբերության մեջ աշխատողների գրեթե 1/3-ը։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նյութական և աշխատանքային ռեսուրսների պլանաչափ օգտագործման, առանձին ռեգիոնների տնտեսության կոոպերավորման և մասնագիտացման պայմաններում յուրաքանչյուր շրջանում բազմաճյուղ արդյունաբերության ստեղծումը խիստ անհրաժեշտություն չէ։ Նյութական արտադրության այդ ճյուղի զարգացումը պլանավորելիս պետք է նկատի ունենալ տվյալ շրջանում նյութական և աշխատանքային ռեսուրսների առկայությունը, նրանց տեղաբաշխվածությունը, կապիտալ ներդրումների մեծությունը և բազմաթիվ այլ գործոններ։ Շիրակի տնտեսական շրջանում մի շարք շինանյութերի խոշոր պաշարների՝ տուֆ, պեռլիտներ, բազալտ, պեմզա, ինչպես նաև համեմատաբար բարձր որակավորում ունեցող աշխատուժի առկայությունը (շրջանի տնտեսության մեջ զբաղվածների կրթական մակարդակը հանրապետական միջին ցուցանիշը գիջում է ընդամենը 10—15 %-ով, իսկ որոշ միավորներում գտնվում է հանրապետական մակարդակի վրա) թույլ են

9 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 441։

տալիս պնդելու, որ տնտեսական շրջանի մեքենաշինության և շինանյութերի արդյունաբերության մեջ գոյություն ունեն տղամարդկանց աշխատուժի ներգրավման պոտենցիալ հնարավորություններ։ Անհրաժեշտ է փոխել միայն կապիտալ ներդրումների ուղղվածությունը։ Բանն այն է, որ չնայած Երևան քաղաքի զարգացման վերաբերյալ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի հայտնի որոշմանը, որով նախատեսվում է մայրաքաղաքում ստեղծել գլխավորապես բնակչության սպասարկման մակարդակի բարձրացմանը նպաստող օբյեկտներ, 12-րդ հնգամյակի պլանային առաջադրանքներով նախատեսվում է ամբողջ հանրապետությունում ստեղծվող մեքենաշինական ձեռնարկությունների ուղիղ կեսը կառուցել Երևանում և ոչ մեկը՝ Շիրակի տնտեսական շրջանում։ Մինչդեռ արդյունաբերության վերոհիշյալ ճյուղերի զարգացման ցածր մակարդակը՝ մի քանի այլ գործոնների հետ մեկտեղ, ՀՍՍՀ այդ տնտեսական շրջանից բնակչության ամենամեծ տարագնացություն պայմանավորող հիմնական պատճառն է։ Շիրակի տնտեսական շրջանի վարչական միավորներից միայն Անիի վարչական շրջանն է, որ բնութագրվում է մեքենաշինության զարգացման բարձր մակարդակով։ 1984 թ. այդ շրջանի մեքենաշինության մեջ զբաղված էր արդյունաբերության մեջ աշխատողների ավելի քան 1/3-ը։ Հիմնականում դրա շնորհիվ է, որ ներկայումս տարագնացությունն աննշան բաժին ունի հենց այդ շրջանում, այն դեպքում, երբ Շիրակի տնտեսական շրջանի կազմի մեջ մտնող երեք վարչական շրջանները՝ Ախուրյանի, Արթիկի և Թալինի շրջանները մրանում են հանրապետությունում ամենամեծ տարագնացություն ունեցող 8 վարչական շրջանների կազմի մեջ։ Ամասիայի շրջանում այդ փաստի բացակայությունը պայմանավորված է ադրբեջանցի բնակչության գերակշռող բաժնով, իսկ Ղուկասյանի վարչական շրջանում՝ նրա բնակչության փոքրաթվությունով։ Կարծում ենք, վերևում թվարկած միջոցառումների իրականացումը թույլ կտա որոշ չափով կրճատել տարագնացությունը, ուստի նաև վերացնել վերջինով պայմանավորված մի շարք բացասական սոցիալական, ժողովրդագրական և այլ բնույթի երևույթները։

Արտադրության անձնական գործոնի օգտագործումը, բացի տնտեսականից, ունի նաև սոցիալական կողմ, որի հաշվի առնելը պակաս կարևոր չէ։ Ընդ որում արտադրության անձնական գործոնի կիրառման տնտեսական արդյունավետության գնահատման և չափանիշի, և ցուցանիշների համակարգի հաշվարկման մեթոդիկան առանձնապես բարդ չէ, մի բան, որ չի կարելի ասել նրա գնահատման սոցիալական ցուցանիշների վերաբերյալ։ Կենդանի աշխատանքի կիրառման տնտեսական արդյունավետության ամբողջացնող ցուցանիշը նրա միավորին ընկնող արտադրված ազգային եկամտի մեծությունն է։ Չնայած այն հանգամանքին, որ վերոհիշյալ ցուցանիշին բնորոշ են որոշակի թերություններ, քանի որ այն հաշվի չի առնում առանձին ռեգիոնների տնտեսության ճյուղային կառուցվածքը, բնակչության կազմը և բազմաթիվ այլ առանձնահատկություններ, այդուհանդերձ արտադրության անձնական գործոնի կիրառման տնտեսական արդյունավետության գնահատման ժամանակ արտադրված ազգային եկամտի ցուցանիշի օգտագործումն առավել ընդունելի է, որովհետև այն ռեալ կերպով բնութագրում է կենդանի աշխատանքի կիրառման արդյունավետությունը։

Արտադրության անձնական գործոնի կիրառման սոցիալական արդյունավետությունը որոշվում է աշխատողների նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման աստիճանով։ Կենդանի աշխատանքի օգտագործման սոցիալական արդյունավետության չափանիշը աշխատողների բարեկեցությունն է, որ ներառում է այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են աշխատանքի բնույթը և բովանդակությունը, դրանց համապատասխանությունը աշխատուժի հակումներին, ընդունակություններին և որակին, աշխատողի հոգևոր զարգացումը և այլն։ Կենդանի աշխատանքի օգտագործման տնտեսական արդյունավետության և սոցիալական արդյունավետության միջև գոյություն ունի օրգանական կապ, նրանք փոխազդող և փոխպայմանավորող են։ Այդ պատճառով ամբողջ

հասարակության և նրա առանձին անդամների շահերը պահանջում են այս կամ այն ռեգիոնի սոցիալ-տնտեսական զարգացման պլանները մշակելիս նկատի ունենալ աշխատանքային ռեսուրսների օգտագործման այնպիսի օպտիմալ ուղղությունների սահմանում, որը առավելագույն չափով հաշվի առնի դրանց վերարտադրության առանձնահատկությունները տվյալ ռեգիոնի շրջանակներում և դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծի բնակչության լրիվ և ռացիոնալ զբաղվածություն ապահովելու համար։ Առանձին անհատների, սոցիալական և պրոֆեսիոնալ խմբերի շահերի համալիրը, նրանց փոխհարաբերությունների դիալեկտիկան հաշվի առնելը իր հերթին սոցիալիստական հասարակության դինամիկ զարգացումն ապահովող կարևորագույն պայմանն է[10]։

ОСОБЕННОСТИ АКТИВИЗАЦИИ ЛИЧНОГО ФАКТОРА ПРОИЗВОДСТВА В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

ВААГН ТОВМАСЯН

Резюме

В условиях перехода экономики на преимущественно интенсивные пути развития в воспроизводстве личного фактора производства важное значение приобретают её качественные характеристики.

Дальнейший прогресс социалистического общества предполагает формирование рационального состава и структуры рабочей силы, её соответствие современному уровню развития материально-вещественных элементов производства. Наряду с вышеизложенным при определении основных направлений развития экономики отдельных регионов немаловажное значение имеет также выявление половозрастной структуры потенциальной рабочей силы. Игнорирование отмеченных особенностей в Армянской ССР, в конечном итоге, породило целый комплекс социально-экономических и других проблем. В частности, снизилась эффективность использования высококвалифицированного, в том числе инженерного труда, была утрачена его общественная значимость и роль, замедлились темпы механизации и автоматизации производственных процессов, образовались внутриреспубликанские и межреспубликанские неорганизованные миграционные потоки рабочей силы и т. д.

С целью устранения указанных нежелательных явлений следует: резко сократить выпуск инженеров и увеличить число специалистов по современным направлениям НТП; совершенствовать процесс распределения и расстановки кадров, в регионах, характеризующихся интенсивным движением рабочей силы, быстрыми темпами развивать отрасли промышленности, требующие мужской рабочей силы.

---

10 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 26. VI. 1987։*